



Project funded by  
EUROPEAN UNION



**Common borders. Common solutions**

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

**Վանաձորի Համայնքապետարանի**

**և**

**Կովկասի տարածաշրջանային բնապահպանական**

**կենտրոնի Հայաստանյան մասնաճյուղի**

**միջև**



**Վանաձոր**

**2020**

## Համագործակցության Հուշագիր

Սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) **Եվրամիության կողմից ֆինանսավորվող BSB 1138 -“Գործընկերություն գյուղական կանաչ տարածքների աղտոտման դեմ”** ծրագրի շրջանակներում կնքվում է Վանաձորի Համայնքապետարանի՝ ի դեմս համայնքի ղեկավար **Մամիկոն Ասլանյանի** և Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի Հայաստանյան մասնաճյուղի՝ ի դեմս տնօրեն **Նունե Հարությունյանի** միջև:

**Հաշվի առնելով** այն, որ զարգացման արդի փուլում Հայաստանը բախվում է նոր մարտահրավերների, այդ թվում՝ թափոնների կառավարման և առանձնացված աղբահանության իրականացման, աղբի վերամշակման սկզբունքների ներդրման հետ:

**Կարևորելով** ծրագրի իրականացման գործընթացում ներգրավված տեղական իշխանությունների և հասարակական կազմակերպությունների միջև սերտ համագործակցությունը ներկայացնում է այն հիմնական մոտեցումը, որը կնպաստի նախագծի շրջանակներում ժողովրդավարական սկզբունքների կայացմանը, կողմերը որոշեցին կնքել սույն Հուշագիրը՝ հետևյալի մասին:

### **Համագործակցության առարկան**

Հաշվի առնելով, որ **ծրագիրը նպատակ ունի** նպաստել շրջակա միջավայրի որակի բարելավմանը և գյուղական վայրերում գետերի ջրազրկման կրճատմանը՝ աջակցելով թափոնների կառավարման և շրջակա միջավայրի վերաբերյալ իրազեկման ժամանակակից փորձի ներդրմանը՝ Հայաստանում, Վրաստանում, Մոլդովայում և միջափամանային համագործակցության և միջուկորտային գործընկերության միջոցով՝ Ռումինիայում, և առանձնահատուկ ուշադրություն է դարձնելու գյուղական բնակավայրերի կարողությունների զարգացմանը:

Սույն Հուշագրով նախատեսված համագործակցության շրջանակում, *Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնը պարտավորվում է ապահովել* ծրագրի պատշաճ իրականացումը.

- ✓ ԵՄ մոտեցումների վրա հիմնված լավագույն փորձի, ինչպես նաև պլաստիկ և թղթե թափոնների տարանջատման սկզբունքների ներդրում,

- ✓ ենսաքայքայվող թափոնների կոմպոստացման, գետերի աղտոտման, թափոնների կառավարման պրակտիկայի վերաբերյալ հանրային բնապահպանական իրազեկվածության մակարդակի բարձրացում և խթանում,
- ✓ ծրագրի գործընկերների միջև գիտելիքների և հմտությունների փոխանակում:

*Համայնքապետարանը* հայտնելով իր աջակցությունը ծրագրի իրականացմանը, *պարտավորվում է ապահովել* քաղաքացիների անմիջական ներգրավվածությունն ու լիարժեք մասնակցությունը ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումներին, կրթական ծրագրերին և տեղեկատվական արշավներին: Ինչպես նաև նպաստել զանգվածային լրատվության միջոցների օգնությամբ տեղեկատվության տարածմանը:

Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:


Սույն Հուշագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակից:

**Վանաձորի համայնքապետարան**

Համայնքի ղեկավար՝  
Մամիկոն Ասլանյան

Ստորագրություն \_\_\_\_\_

«4» օգոստոս 2020թ.  
ք. Վանաձոր



**Կովկասի տարածաշրջանային  
բնապահպանական կենտրոն**

Տնօրեն՝  
Նունե Հարությունյան

Ստորագրություն \_\_\_\_\_

«4» օգոստոս 2020թ.  
ք. Վանաձոր

